Կազմված է 01.11.2018թ.

Ընդունված է
<<Արժանապատիվ ուղի>>
Կուսակցության 01 «նոյեմբեր» 2018թ.
Հիմնադիր համագումարի
որոշմամբ

Տպագրված է 4 օրինակից
Օրինակ 1
Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
Պետական ռեգիստրի
գործակալության կողմից
30 11 2018թ.
Գրանցման թիվ 211.122.1048227
Հարկ վճարողի հաշվառման համար 05554558

Նախագահ՝
Հ. Մարգարյան

Պետական ռեգիստրի գործակալություն
Հասուն Հերությունյան

05

ԾՐԱԳԻՐ
<<ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՈՒՂԻ>>
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

<<ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՈՒՂԻ>>

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

<<Արժանապատիվ ուղի>> կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակն է մարդու ազատ, անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիվ ապրելու և իր իրավունքների իրականացումն ապահովելու համար իրավական, սոցիալական, ժողովրդավարական, արդար ու մրցունակ պետության կերտումը և ազգային արժեքների վրա խարսխված սոցիալական համերաշխության, հանդուրժողականության և գործընկերության հենքով բաց հասարակության ստեղծումը:

Հայ ժողովուրդը բազմամյա պատմության ընթացքում ապացուցել է արժանապահիվ ու հպարտ ապրելու իր ունակությունը, փաստել հարատևման իր իրավունքը: Այսօր ավելի քան երբևէ, Հայաստանում բնակվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրել ազատ, արժանապատիվ, հպարտ և բարեկեցիկ:

<<Արժանապատիվ ուղի>> կուսակցությունը(այսուհետ՝ կուսակցություն) իր գաղափարական և ծրագրային հիմնադրույթներում առաջնային է դիտում մարդուն, կարևորում է ազգային արժեհամակարգի վրա խարսխված իրավունքի գերակայության և համամարդկային արժեքների վրա հիմնված իրավական պետության ձևավորումը: Կուսակցության գործունեության գլխավոր նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության՝ ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության վերաարժևորումը, որտեղ իրապես կերաշխավորվեն և կպաշտպանվեն մարդու ու քաղաքացու սահմանադրական իրավունքները, ազատությունները և արդար ու արժանապատիվ ապրելու իրավունքներն ու սկզբունքները:

Կուսակցության նպատակները

Մարդու ազատ, անվտանգ, արժանապատիվ, բարեկեցիկ ու հպարտ ապրելու և իր իրավունքների իրականացումն երաշխավորելու ու ապահովելու համար ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության կերտումն է, որտեղ կգործի իրավունքի գերակայությունը, օրենքի իշխանությունը և իրապես կերաշխավորվեն ու կպաշտպանվեն մարդու ու քաղաքացու սահմանադրական իրավունքները ու ազատությունները:

- Հայ ժողովրդի ստեղծագործական, մտավոր, տնտեսական ներուժը միավորող, շուկայական հավասար ու արդար մրցակցությունը երաշխավորող

տնտեսական հզոր, քաղաքակիրթ, զարգացած և միջազգային ասպարեզում մրցունակ պետության կերտումը:

- Կուսակցությունը գերակա է համարում ՀՀ, ԼՂՀ ազգաբնակչության և աշխարհասփյուռ հայ ժողովրդի ազգային համալիր անվտանգության ապահովումը, ներառյալ՝ ռազմական, քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվական բարձր տեխնոլոգիական, հոգևոր մշակութային, սպորտի, ժողովրդագրական և բնապահպանական ոլորտները: Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովումը դիտում է որպես հայ ժողովրդի գոյատևման և հարատևման երաշխիք:

Կուսակցության հիմնադրույթները և խնդիրները

- Կուսակցությունն իր գաղափարական և ծրագրային հիմնադրույթներում առաջնային է համարում մարդուն, կարևորում է ազգային արժեհամակարգի վրա խարխսված իրավունքի գերակայության և համամարդկային արժեքների վրա հիմնված իրավական պետության և օրենքի իշխանության ձևավորումը:

Կուսակցության ծրագրի հիմքում ընկած են ազգի և ժողովրդի առջև իշխանության պատասխանատվությունը, ժողովրդավարության, մարդու իրավունքների գերակայության վրա հիմնված օրենքի իշխանության ձևավորումը, սոցիալական արդարության և հավասարության վերականգնումը, ժողովրդի սոցիալական, տնտեսական ու քաղաքական համերաշխության ձևավորումը, աշխարհասփյուռ հայության համախմբումը, միասնականության ու սոցիալ-տնտեսական առաջընթացին նպաստումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի և հայանպաստ լուծումը:

Կուսակցությունը որպես խնդիր է դիտարկում

- Երկրի քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, գիտական, մտավոր և հոգևոր ներուժի հզորացումը:
- Արժանապատվության, համերաշխության, սոցիալական արդարության և հանդուրժողականության հիմքի վրա խարսխված հասարակության ձևավորումը, անհատական և տնտեսական արդար մրցակցության կտրուկ բարձրացումը, ձևավորված երկակի ստանդարտների բացառումը:
- Քաղաքացիական հասարակության ինստիտուտների ամրապնդումը, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ապահովումը:

- Հայրենիք սփյուռք արդյունավետ համագործակցության խորացումը, արտագաղթի նվազեցումը, կանխումը և հայրենադարձության համար իրատեսական նպաստավոր պայմանների ստեղծումը:
- Սոցիալական բևեռացումը բացառող հավասարակշռված հանրային կառուցակարգերի ստեղծումը, պետության, հոգածության բարձրացումը սոցիալական ապահովության, առողջապահության և կրթության ոլորտներում:
- Ազատ, մրցակցային շուկայական տնտեսության երաշխավորումը և իրավական պաշտպանվածությունը:
- Նոր աշխատատեղերի ստեղծումը, արդյունաբերության վերականգնումը և վերագործարկումը, բարձր տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսության ոլորտում պետական հոգածության ընդլայնումը:
- Դատաիրավական համակարգի անկախության ապահովումը, արդարադատության իրականացման համար հաստատուն և իրատեսական երաշխիքների ստեղծումը:
- Իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր, դատական, կայուն զարգացումը և նրանց միջև համագործակցության ու փոխադարձ հակակշռման ապահովումը՝ հավասարակշռման և զսպման մեխանիզմերի ներդրման միջոցով:

Քաղաքական կառավարման և պաշտպանության ոլորտում կուսակցությունը առաջնային է համարում՝

- Քաղաքական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության ներդաշնակ, բնականոն զարգացումը և ակտիվությունը, կայուն, կենսունակ և մրցակցային կուսակցական համակարգի կայացումը:
- Իշխանության ձևավորման թափանցիկ ու մրցակցային մեխանիզմների ստեղծումը, ընտրական արդար և հասարակության կողմից ընկալելի համակարգի կայացումը:
- Հետևողական պայքար ընտրական խախտումների, կոռուպցիայի, կաշառակերության, պետության և ժողովրդի միջոցների փոշիացման, յուրացման և այլ օրինազանցությունների դեմ:
- Տեղական ինքնակառավարման մարմինների և համատիրությունների զարգացումն և անկախության երաշխավորումը:
- Անկախ, անկողմնակալ և արդյունավետ գործող դատական համակարգի երաշխավորումը, օրենքի առջև բոլոր քաղաքացիների իրական հավասարության ապահովումը:
- ԶԼՄ-ների ազատ և անվտանգ գործունեության ապահովումը:
- Ժամանակակից սպառազինություններով ապահովված, արդիական զենքով և զինտեխնիկայով համալրված, մարտունակ և մրցունակ զինված ուժերի զարգացումը, պրոֆեսիոնալ զինծառայողների ավելացումը, աստիճանական անցումը պրոֆեսիոնալ բանակի:

- Ժամանակակից ռազմաարդյունաբերական համալիրի ձևավորումը, շարունակական ընդլայնումը և հզորացումը, սահմանպահ զորամասերում և սահմանակետերում ժամանակակից վերահսկողության և դիտարկման տեխնոլեգիաների ներդրումը:
- 20 տարի և ավելի ծառայած, կենսաթոշակի անցած զինծառայողների բնակարանային պայմանների բարելավումը:

Կուսակցության արտաքին քաղաքական մոտեցումները

- Սփյուքի հետ համագործակցությունը, ԼՂՀ հիմնախնդրի լուծումը և հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը:
- Եվրոպական միության երկրների հետ համագործակցության խորացումը և զարգացումը:
- Ռուսաստանի Դաշնության հետ բարեկամական և եղբայրական կապերի շարունակական ամրապնդումը ու զարգացումը և որպես ռազմավարական բազմամյա ու հուսալի գործընկեր ռազմավարական համագործակցության խորացումը, ամրապնդումը և ռազմական ու տնտեսական անվտանգության դաշինքի հետագա խորացումը:
- Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական և գործընկերային կապերի զարգացումը:
- Չինաստանի և ԱՄՆ-ի հետ գործընկերային կապերի խորացումը, համագործակցության հետագա զարգացումը տարբեր ոլորտներում:
- Շարունակել գործընկերային կապերի խորացումը և համագործակցության զարգացումը բոլոր այն երկրների հետ որտեղ առկա են տնտեսական ու քաղաքական շահերի համադրումը:
- Կուսակցությունն առաջնային է դիտարկում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը՝ ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքի ամրագրման միջոցով: Աշխարհի տարբեր երկրներում ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա անկախացման գործընթացների արդյունքում նոր պետությունների ձևավորումն իրականում լրջագույն և անբեկանելի նախադեպեր է ստեղծել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային ինքնորաշման իրավունքի իրականացման համար:
- Կուսակցությունը անհրաժեշտ է համարում հայ ժողովրդի շահերի ու իրավունքների պաշտպանությունը միջազգային ասպարեզում:
- Սփյուռքի հայ գաղթօջախների հզորացումը, իրենց բնակության վայրերում հայ բնակչության անվտանգությունը, հայկականության պահպանումը և բարեկեցությունը:
- Անհրաժեշտ է անել ամեն ինչ, որ աշխարհասփյուռ հայությունը և հայ մարդը չկտրվի իր արմատներից ու իր հայրենիքից:

- Սփյուռքի դերի բարձրացում և ակտիվացում Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում:
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում Կուսակցությունը նպաստելու է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը, ընդունմանը և հասցված վնասների հատուցմանը:
- Կուսակցությունը անհրաժեշտ է համարում ցեղասպանության դեմ պայքարի և դրանց կանխարգելման համաշխարհային նոր քաղաքականության ձևավորման գործում Հայաստանի Հանրապետության նախաձեռնողական առաքելության ստանձնումը և առաջնորդությունը, մշակելով միջազգային մասշտաբով դրանց բացառման ու կանխման նոր մոտեցումներ և մեխանիզմներ:

Տնտեսական ոլորտում կուսակցությունը առաջնային է համարում

- Տնտեսվարող սուբյեկտների համար մրցակցային պայմանների ապահովումը:
- Անզիջում պայքարը ստվերի և օլիգոպոլ- մենաշնորհների դեմ:
- Հասցեական աջակցությունը փոքր ու միջին տնտեսություններին:
- Փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը միտված հարկային արտոնությունների և ցածր տոկոսադրույքներով երկարաժամկետ վարկերի տրամադրումը:
- Մանր և միջին բիզնեսի պաշտպանությունը, զարգանցումը և միջին խավի ձևավորմանն աջակցությունը:
- Գյուղատնտեսության ոլորտում նոր հարկային արտոնությունների սահմանումը, ոռոգման ջրի սակագների և հողի հարկի դրույքաչափերի իջեցումը, պարարտանյութերի անվճար տրամադրումը գյուղացիական տնտեսություններին և ընդհանրապես գյուղմթերքի արտադրության ապահովագրումը: Ապահովագրական, աջակցման և զարգացման հիմնադրամների ստեղծումը:
- Սեփական հողատարածքները մշակող գյուղացիների աշխատանքային ստաժի հարցի լուծումը (անհրաժեշտ է գյուղատնտեսական աշխատանքը հաշվարկել որպես աշխատանքային ստաժ):
- Տարածքային համաչափ զարգացմանը միտված գործուն մեխանիզմների ներդրումը, որոշ նախարարությունների տեղափոխումը Երևանից մարզեր:
- Համայնքների անձնագրավորում, սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներին առանձնահատուկ արտոնությունների տրամադրումը և հասցեական պետական աջակցությունը:
- Արտահանման աջակցությունը, բանկային տոկոսադրույքների իջեցումը:

- Հարկային համակարգի պարզեցումը, ստուգող և վերահսկող տեսչությունների էական կրճատումը, մանր, փոքր ու միջին բիզնեսի համար հաստատագրված հարկերի ներդրումը, շրջանառության հարկի իջեցումը, շեմի բարձրացումը:
- Այլընտրանքային էներգետիկայի զարգացման խրախուսումը և աջակցությունը, էներգետիկ աղբյուրների դիֆերսիֆիկացումը, նոր ատոմակայանի կառուցումը:

Սոցիալական ոլորտում կուսակցությունը առաջնային է համարում

- Նվազագույն աշխատավարձի և կենսաթոշակի բարձրացումը (հաշվի առնելով գնաճը):
- Բնակչության կենսամակարդակի բարձրացումը, սոցիալական անհավասարության կրճատումը:
- Հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով քաղաքացիներին տրվող նպաստների և հասցեագրված օգնությունների ավելացումը:
- Նոր աշխատատեղեր ստեղծող ձեռնարկությունների համար լրացուցիչ հարկային արտոնությունների տրամադրումը:
- Աղետի գոտում անօթևանության խնդրի վերջնական լուծումը:
- 1998թ-ի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժից տուժած քաղաքացիներին տրամադրված փոխհատուցման գումարների վերահաշվարկը և հետվերադարձը:
- Աղետի գոտում լրացուցիչ հարկային արտոնությունների սահմանումը:
- ԽՍՀՄ խնայբանկերում դրված ավանդների փոխհատուցման գործընթացի շարունակումը:
- Պետական աջակցության ավելացումն ու ընդլայնումը նորաստեղծ, բազմազավակ ընտանիքներին և միայնակ ու բազմազավակ մայրերին:
- Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի վերացումն ու կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը:
- Վճարովի ավտոկայանատեղերի համակարգի վերանայումը, կարմիր գծերի իսպառ վերացումը:
- Առանց դատարանի որոշման քաղաքացիների գույքի և դրամական միջոցների կալանքի ու բռնագանձման բացառումը:

Առողջապահության և բնապահպանության ոլորտներում կուսակցությունը առաջնային է համարում

- Անհետաձգելի բուժօգնության անվճար տրամադրումը:
- Պետական պատվերի շրջանակներում իրականացվող բուժօգնության ընդլայնումը:
- Պետությունը պարտավոր է ապահովել ու երաշխավորել հիվանդի բուժումը, անկախ նրանից հիվանդը վճարունակ է թե ոչ:
- ընդերքի օգտագործման կանոնները խախտողների և չարաշահողների նկատմամբ խստացնել պատասխանատվությունը:
- Ներդնել լրացուցիչ և ժամանակակից մեխանիզմներ կանաչ տարածքների և անտառների պահպանման համար:
- Անտառածածկույթի պարբերաբար վերականգնումը, հանքարդյունաբերության ոլորտում թափոնների արդյունավետ վերամշակումը և պահպանումը:
- Ջրային ռեսուրսների, մասնավորապես Սևանա լճի արդյունավետ կառավարումը և ջրի մակարդակի բարձրացումը:

Գիտության, կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում կուսակցությունը առաջնային է համարում

- Գիտության համակարգի արդիականացումը, պետական միջոցների և բյուջետային հատկացումների ավելացումը:
- Երիտասարդ գիտնականներին և ուսումնական հաստատություններին պետական աջակցության ընդլայնումը:
- Կրթական հավասար մրցակցային պայմանների ապահովումը, երկարաժամկետ ցածր տոկոսադրույքով ուսանողական վարկերի տրամադրումը:
- Մշակութային կոլեկտիվների ստեղծագործական գործունեությանը նպաստող անհրաժեշտ պայմանների ապահովումը:
- Մշակությանն հուշարձանների պահպանման նպատակով բյուջետային հատկացումների ավելացումը:
- Մշակութային ոլորտում թվայնացված ժամանանակից տեղեկատվական բազայի ստեղծումը:
- Սպորտի զարգացումը պետության ռազմավարական հիմնախնդիրներից մեկն է, այն հանդիսանում է բնակչության առողջապահության պահպանման և

զինված ուժերի բարձր մարտունակության ապահովման գրավականը, որի համար անհրաժեշտ է մշակել սպորտի զարգացմանը միտված պետական համալիր քաղաքականություն՝ բարձրացնելով սպորտի պետական ֆինանսավորման ծավալները, ընդունել պետական ծրագրեր, պատրաստել ու վերապատրաստել ժամանակակից մասնագետներ, ապահովել առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմանները:

- Անհրաժեշտ է ընդլայնել ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի մարզադպրոցների ու մարզական ակումբների ցանցը:
- Յուրաքանչյուր ազգի ապագան դա երիտասարդ սերունդն է, երիտասարդները մեր հույսն են ու ապագայի տերերը, կուսակցությունը աջակցելու է, որ բոլոր երիտասարդները ունենան հավասար մեկնարկային հնարավորություններ՝ իրենց ապագան կերտելու համար, առաջնային համարելով երիտասարդների սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավունքների պաշտպանության պայմանների ստեղծումը:

Կուսակցության գաղափարախոսական և արժեքային հիմնադրույթները

- Կուսակցության գաղափարախոսության, ծրագրային հիմնադրույթների և արժեհամակարգի հիմքում ընկած են ազգի ու ժողովրդի առջև իշխանության պատասխանատվությունը, ժողովրդավարության, մարդու իրավունքների գերակայության վրա հիմնված օրենքի իշխանության ձևավորումը, ազգային միասնականության ամրապնդումն ու գենոֆոնդի պահպանությունը, ազգային անվտանգության և ինքնիշխանության վրա հիմնված սոցիալական արդարության և հավասարության վերականգնումը, ժողովրդի սոցիալական, տնտեսական ու քաղաքական համերաշխության ձևավորումը, աշխարհասփյուռ հայության համախմբումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի և հայանպաստ լուծումը:

Կուսակցությունը ազգերի ինքնորոշման իրավունքը ընդունում է որպես մարդու իրավունքների հավաքական ամբողջականություն, ժողովուրդների իրավունքների և անվտանգության կարևոր երաշխիք:

Կուսակցությունը կարևորում է հայ առաքելական եկեղեցու առանցքային դերը հայ ժողովրդի կյանքում:

Կուսակցությունը նպաստելու է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդմանը և արդյունավետ զարգացմանը, որը կերաշխավորի հզոր ու զարգացած, պաշտպանված և անվտանգ պետության ձևավորումը:

Կուսակցությունը որպես խնդիրներ գերակա է համարում

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրության օր առաջ բարեփոխումը, հանրաքվեի անցկացումը (հասարակությանը անհրաժեշտ է ոչ թե աշխարհում իր նախադեպը չունեցող գերլիազորություններով օժտված վարչապետական մոդելի սահմանադրություն, ինչպիսին ներկայիս գործող սահմանադրությունն է, այլ ազգային ավանդույթների ու արժեքների վրա խարսխված միջազգային չափորոշիչներին ու սկզբունքներին համահունչ սահմանադրություն, որը կերաշխավորի խորհրդարանական կառավարումը):
2. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների լիազորությունների վերանայումը և կրճատումը (առանց դատարանի որոշման որևէ պատկան մարմին իրավունք չունի քաղաքացուն զրկել իր սեփական միջոցներից, անկախ գումարի չափից կալանք կամ բռնագանձում իրականացնել քաղաքացու գույքի և դրամական միջոցների վրա):
3. Հիմնովին վերանայել օպերատիվ հետախուզության մասին օրենքը, ստեղծելով օրենսդրական երաշխիքներ քաղաքացիների կապի միջոցներով հաղորդակցության գաղտնիությունը ապահովելու համար(առանց դատարանի որոշման արգելել ցանկացած եղանակով գաղտնալսման իրականացումը):
4. Վերացնել պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը այն դարձնելով կամավոր:
5. Էապես վերանայել ճանապարհատրանսպորտային երթևեկության անվտանգության մասին օրենսդրությունը (նվազագույնի հասցնել տուգանքների չափը, արագաչափերի քանակը, վերացնել կարմիր գծերը, վերանայել ավտոմեքենաների տեխզննության և ԱՊՊԱ համակարգերը):
6. Ստեղծել օրենսդրական բազա՝ պետական երաշխավորությամբ գյուղատնտեսական ցածր տոկոսադրույքներով երկարաժամկետ վարկերի տրամադրման համար (գյուղացին պետք է ապահովված լինի ոռոգման ջրով, թունաքիմիկատներով և սերմացուներով, հողը մշակող գյուղացիների աշխատանքը օրենքով սահմանված կարգով պետք է համարվի աշխատանքային ստաժ):
7. Համայնքների խոշորացման ծրագրի վերանայում, համայնքների խոշորացումը կամ միջհամայնքային միավորների ստեղծումը անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվի բացառապես տեղական հանրաքվեների միջոցով, որի համար պետք է համայնքի բնակչության նվազագույնը 2/3-ի համաձայնությունը:
8. Մարզերի օպտիմալացում այն հաշվարկով, որ լինի 5 մարզ և Երևան քաղաքը: Անհրաժեշտ է ընդունել տարածքային կառավարման մասին օրենք՝ ներդնելով մարզպետների ընտրովի համակարգ:

9. Կատարել ընտրական օրենսգրքի փոփոխություն որով կսահմանվեն Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում համայնքների ղեկավարների ուղիղ ընտրություն՝ համայնքի բնակիչների կողմից:
10. Նախարարությունների միավորում և ապակենտրոնացում (գյուղատնտեսության նախարարության տեղափոխում Արմավիրի կամ Արարատի մարզ, սպորտի, երիտասարդության և մշակույթի նախարարության տեղափոխում Գյումրի քաղաք):
11. Գյումրու Շիրակ օդանավակայանին հասցեագրված պետական աջակցության և լրացուցիչ արտոնությունների տրամադրում:
12. Շիրակ հեռուստառադիո ընկերության պահպանում և հետագա զարգացման համար պետական երաշխիքների ստեղծում:
13. 1988թ-ի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքով տուժած բնակիչներին տրամադրված փոխհատուցման գումարների հաշվառում, օրենքով վերաձևակերպում և փոխհատուցման իրականացում: ԽՍՀՄ ավանդների փոխհատուցման գործընթացի շարունակություն:
14. Սահմանապահ զորքերի ամբողջությամբ համալրում պայմանագրային զինծառայողներով, աստիճանական անցում պրոֆեսիոնալ բանակի:
15. Շիրակի մարզում Ռուսաստանի Դաշնության հետ համատեղ ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների ստեղծում, որտեղ աշխատանքի կներգրավվեն և մարզի և ռուսական ռազմակայանի բնակիչները:
16. Ուսումնական հաստատություններում տարկետման իրավունքի վերականգնում էապես կրճատելով տարկետման տեղերի թիվը և ըստ առանձին մասնագիտությունների սահմանել ուսանողական վարձավճարների մաքսիմում չափը, հաշվի առնելով քաղաքացիների նվազագույն աշխատավարձը և եկամուտները:
17. Շքեղության հարկի մասին օրենքի ընդունում(այդ հարկատեսակի գծով հավաքված գումարները բացառապես ուղելով անապահով խավի սոցիալական աջակցությանը):
18. Անկախ համայնքի ֆինանսական հնարավորություններից պետական աջակցությամբ նախակրթարանները պետք է լինեն անվճար:
19. Վերանայել 12ամյա կրթական համակարգը, այն դարձնելով 10-ամյա:
20. Գազամատակարարման ոլորտի պայմանագրերի վերանայում, գազի սակագնի վերանայում, ներտնային սպասարկման ծառայության դիմաց վճարվող գումարները գազի սակագնի մեջ ներառում: